

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Աղի գնացող աշառը

Մարդ որ մեկ բան արած չի ըլում,
Ամեն բան աչքին խաղ է երևում,
Զահել մարդը հո՝ ինչ որ ասում ես,
Անկաշվեր անում, շուռ տալիս երես:

Մեկ թարաքյամա մեկ քանի աշառ
Առաջն էր արել գնում աղի սար:
Խոտ կերած աշառ՝ էնպես դուզ մեյդան.
Քամին էլ որ քիթն չի մտավ բիրդան:
Էլ տիրոչն ոխին չի մտիկ արին,
Պոչ ու գլուխ ցցած՝ նրանք զու քաշեցին:
Տիրոնչ հոգին հո՝ բողազն հասցրին,
Էնքան դես ու դեն՝ խաղ, տրտինգ արին:
Բիրդան մեկ չոլում մեկ քանի եզը
Նրանց ռաստ էկան, կտրեցին հազը:
«Ի՞նչ տեղ եք գնում՝ ա՛խպեր՝ խե՛ր ըլի»,

Տնքալով հարցրին: Մեր աչառ, մոգի
Էլի իրանց խաղն նորեն սկսեցին,
Էլի փոնչալով՝ գլխներն քամակին
Դրած՝ քեֆը չաղ՝ պատասխան տվին:
«Աղի՛ ենք գնում, աղի» ասեցին:—
Գնացե՛ք՝ աստված ձեր բանն հաջողի,
Հըլա համն առե՛ք ձեր ասած աղի,
Հետո ձեզ կասենք, հիմիկ վախտը չի»:—
Եզերն ասեցին ու ընկան խոտի:
Աղը որ բարձած՝ էլի եդ էկան,
Քամակ ու ուսեր ուռած, նրանց տեսան:
Էլի որ հարցրին ինչ տեղից գալը,
Էլ ի՞նչ էր նրանց ահվալն ու հալը,
Շլնքները ծուռ, ձեն ու շունչ կտրած.
Մեկը խոր նաֆասն քաշելով՝ ասաց.
«Աղի՜ց ենք գալիս, աղից՝ հե՛ր օրհնած:
Էլի ի՞նչ ես մեր ցավն՝ ա՜խ՝ դու անում բաց»:—